

գականձագ կողմամբն զարմանալատ աղբերակօք կարկաշահոսիւք եւ ծաղկապաճոյճ փոքր պարտիզիւ¹: Իսկ յարեւմտն՝ ծիծաղածաւալ, երկարաչու, վիմաբուղիս յորդընթացիւ գետով եւ թեկնէթեկ հեղաքայլ առուիւ՝ ոլորտախաղացեալ առ հարաւով², գեղաւորեալ ծառատնկօք պողաւէտիւք: Իսկ ի հիւսիսոյ առ մուտն արեւու եւ բարձրաբերձ տամբք քրիստոնէից՝ հպաւորեալ շիրմիւք հաւատացեալ ննջեցելոց³:

Չոյցն Սուրբ Վանքս մեծանուն, ի հիմանէ նորակերտեալ կրկին՝ սրբատաշ, կրամած, խաչակառ կաթուղիկէիւ եւ ըստտես բնակարանիւք, աշխիբար-իւն քրտի է- ճիւ շարժանալի վարդապետ-իւն պետիւն յարեւել-ս, եկեղեցական զգեստիւք եւ բնաւին անթերի իրօք եւ պիտոյիւք զարդարեալ

նեցաւ Յովհաննէսը (Ղուկաս Ա). եւ աւետիսն նախաբնիւ վերցաւ Եղիսարէթի վրայէն: — Ա՛րարի աղաւաղումով (գրատեղափոխութեամբ) եղած է Ա՛րարի կամ Ա՛րարի:

1 Արեգականձագ = արեւելեան կողմը. Ծաղկապաճոյճ փոքրիկ պարտեզը, Բարտիներու պարտեզ մի՛ է հիմայ: Ճիշդ Ամրտողի արեւելեան կողմը վանքին կից եւ ցած դիրքով: Աղբերները, որ տուններուն տակն են, հասարակաց պողոտայով կը գատուին պարտեզէն:

2 Այն գետը, որ Ամրտողու Արեւմտեան կողմէն, լեռներէն կը բխի կու գայ եւ վանքի հարաւային կողմը ծռելով՝ թեկնէթեկ, հարաւ-արեւմտեան ուղղութեամբ կ'երկընայ մինչեւ Տիգրիս, կ'ըսուի խոցերով-գետ, խոցերու-գետ, խոցերով-գետ թրքաց Ա՛րարի Չոյց. ընդհանուր անունով. Պիկիւ-սոյոս, (ապը-Պիթիւս). յորդ, ջինջ, պաղ, ջուր մի՛ է. որմէ առուակ մը զտած են Գոմնց վանքի առջեւէն սկսելով, որ վանքին (Ամրտողի) եւ այլ ջաղացքները դարձնէ: Շատ սիրուն է վանքին ջաղացքին գրաւած տեղը խոցերով գետի եւ զինքը դարձնող վտակին մէջ տեղ, Ամրտողի հարաւային-արեւմտեան կողմը:

3 Վանքին հիւսիսային արեւմտեան կողմը կցուած է հայոց գերեզմանատունը, իսկ տունները հիւսիս եւ հիւսիսային-արեւելեան ուղղութեամբ: